քին՝ աստղերը բարձր պահելու համար։

Զարմանալի է. տեղ տեղ ձիւն կայ։

Կամուրջ՝ գետի վրայ։ Ցետոյ բարձրանում ենք։

Սառել եմ։ Վենետիկում գնած վերարկուիս տակ Նոր Բայազետը ձիւն է դիզել։ Ոսկորներիս վրա սառ է հալւում։

Մեզ դիմաւորում է միլիցիաների մի խումբ։

— Գալիս էինք ձեր յետեւից։ Ընկեր Լուկաշինը ղրկեց։

Սանդուխներ։ Լայն մի մայթ։ Հասել ենք։

Դուռը բացւում է վերջապէս եւ դրսի ծանր լուութիւնը հրում է մեզ ներս։

Հասել ենք։

* * *

Մեծ մի սրահի մէջ ծխախոտի ծուխը կառիերի գոյներով դէմքեր է ծեփել։ Կլոր մի սեղանի շուրջ իշխանութիւնը մէկը միւսի ետեւից զեկուցումներ է լսում։ Ամէն մի պաշտօնեայի հետ ներս է մտնում սխտորի եւ կաչուի ծանր մի հոտ եւ յուզում։

Գործկոմը ներկայացնում է։ Պաշտօնեան աչքերը չոռում է եւ սպասում։ Բթի տակ հարց են մրմռում ու զեկուցողը կմկմում է։

— Ի հարկէ, ի հարկէ ... դէ այդ մասին մանրամասն ինձ կը գրէք Երեւան։

Ու պաշտօնեան սողում է դուրս։

Դրան մօտ կանգնել է խեղճ մի մարդ։ Կարճահասակ, ահագին կօշիկներ ոտքերին, արտասուոց մի պ'ենդժակ, վայր թափուող տաբատ, երկայն բեխեր, կնճիռներով լեցուն դէմք եւ վաղուց չածելուած կարճ ծնօտ։

Ձեռքերը գրպանն է դրել եւ անհանգիստ սպասում է։ Ամէն անգամ, որ Գործկոմը մօտենում է դրան, մարդը վառվռուն աչքերով նրան է նայում, բայց Գործկոմը անցնում է իբր թէ նրան չի տեսնում։

Զգիտեմ ինչո՞ւ այս մարդը առանձնապէս հրաւիրում է իմ ուշադրութիւնս։ Նախ՝ չափազանց խեղճ է, իր կեցուածքի մէջ էլ ծիծաղելի, բայց յայտնի է, որ ինչ որ մի բան սաստիկ յուզում է նրան, ներսը մաշում եւ որ նա հսկայ ճիգ է անում իր արժանապատուութիւնը պահելու։ Ցայտնի է նաեւ, որ Գործկոմին չատ էլ հաճելի մարդ չէ. նա նրան համարում է իբրեւ «արհամարհելի քանակութիւն», ոչինչութիւն, ոջիլ։

Գործկոմը մօտենում է իշխանութեան եւ ինչ որ բան փսփսում։ Վերջապէս մարդու ոտքերը տարատի մէջ լողում են, նա մօտենում է եւ վճռական կերպով ու երկարօրէն՝ բռունցքը օդի մէջ կարճահարուած մրճահարելով՝ ինչ որ մի բան է խօսում։ Ես զգում եմ, որ եթէ մենք այստեղ չլինէինք, խեղճ մարդու դէմ պիտի պոռային։ Իշխանութիւնը յօնքերը ժողոված բարեհաճում է լսել եւ մինչեւ անգամ մեղմ ձայնով կրկնում է.

— Դէ ի հարկէ, ի հարկէ...այդ մասին մանրամասն ինձ գրեցէք Երեւան։

Մարդը ձեռքը երկարում է բարեւելու համար, բայց որովհետեւ Երեւանը ծխելու համար լուցկի է վառում, մարդը ձեռքը երկարած, ասես ճանապարհ է ցոյց տալիս, իր տարատը ուղղում է դէպի դուռը եւ դուրս է գլորւում։

— Իդիո՛տ,— ասում է Գործկոմը։

— Ո՞վ է։

— Դպրոցների տեսուչը։ Ուզում է ինձանից աւելի կոմունիստ ձեւանալ...տխմարի մէկը։

— Եղբայր, անօթի մեռանք։

— Ոչխար ենք մորթել։

* * *

Քանի անգամ փորձեցին ընդհանուր խօսակցութիւն առաջ բերել։ Էնպէս, մի տաք մթնոլորտ։ Բան դուրս չեկաւ։ Ցուրտ էր բարոյապէս եւ ցուրտ էր ֆիզիքապէս։ Առանձին խմբեր կազմեցինք եւ մենք «չեզոք մտաւորականներս» անկիւնը քաշուեցինք աւելորդ հիւրերի մեր դերի մէջ։

Ահաւոր այդ անօթութիւնների համար խաչած ոչխարը վերացական կերպարանք առաւ։ Ցոգնած, մրսած եւ միշտ անօթի ամէն մէկը մտածում էր, թէ ո՞ւր եւ ինչպէ՞ս պիտի պառկի։ Բայց Գործկոմը, շարժուն, վայելուչ եւ քաղաքավարի, ուզեց անպատճառ մեզ զրաղեցնի եւ իր գործունէութեան մասին էլ մանրամասն տեղեկութիւններ պատմեց։

— Այսօր, ասացին, գնացել էք Սեւանայ կղզին։

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան